

Ա.

Բ Ն Ա Գ Դ Բ Ը

Ճամբորդութեան մը նկարագրութիւնը, իր փոքր ծաւալին մէջ, թերեւս շահեկան չթուի շատերուն: Սակայն, մօտաւորապէս 270 տարի առաջ Եթովպիա այցելող Յովհաննէս անուն արքեպիսկոպոսի մը այս ուղեգրութիւնը հետաքրքրական վաւերագիր մըն է, երբ նկատի ունենանք հեղինակին անձը, որ իր ժամանակին անցքերուն մէջ գործօն մասնակցութիւն ունեցած է եւ կարեւոր տեղ մը գրաւած՝ իր դարուն պատմութեան մէջ:

Իր գործը ոչ միայն ասով կարեւորութիւն կ'ըստանայ, այլ նաև այն պատճառով որ հայ եպիսկոպոսը կը հանդիսանայ, թերեւս անգիտակցաբար եւ բոլորովին պատահական կերպով, առաջին օտարականը, որ տեսած է Կապոյտ Նեղոսի ակը: Իրմէ առաջ ո՛չ ոք կրցած է գտնել այդ ակը, հակառակ այն մեծ հետաքրքրութեան, որ հին դարերէ ի վեր ունեցած էին մարդիկ, երևան հանելու համար նշանաւոր գետին ծագում առած վայրը, եւ սակայն չէին յաջողած: